ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/66

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 29.05.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/66 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար՝ շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1.1 կետով գնման առարկա է հանդիսանում՝ ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզայի վարչության շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն և «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում հայտով ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 11.05.2018թ. տրված թիվ 3382-02 երաշխիքը, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ քննչական կոմիտեն, իսկ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն՝ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Այնուամենայնիվ, նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է՝

- Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Գազկոմշին» ՍՊԸ-ին:
- Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ

ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը:

Նշված որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ղեկավարները «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիքը պետք է պահանջեն սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին համապատասխան:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի

ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Ընթացակարգի հրավերի 10.3-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 11.05.2018թ. տրված թիվ 3382-02 երաշխիքը, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ քննչական կոմիտեն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. ժամը 09:00-ի թիվ 2 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում առկա փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան: Իսկ նույն արձանագրության 5-րդ կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընկերությունը հայտնել է, որ նույն «Գազկոմշին» ՍՊԸ-ն ս.թ. մարտի 29-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ պարոն Մ. Անանյանին ներկայացրել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 բողոքը, որով վիճարկել է իր կողմից մեկ այլ ընթացակարգի շրջանակներում ներկայացրած բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար ՀՀ ֆինանսների նախարարության փոխարեն պատվիրատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան նշելու հիմքով «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման իրավաչափության հարցը: Ըստ վերոհիշյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում որպես

բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ինչը տվյալ դեպքում չէր կատարվել «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից:

Վերոնշված բողոքի վերաբերյալ 17.04.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և որոշել է մերժել այն: Վերոհիշյալ որոշմամբ արձանագրվել է, որ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ինչը ամրագրվել է ընթացակարգի հրավերով, մինչդեռ «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես բենեֆիցիար ՀՀ ֆինանսների նախարարության փոխարեն նշել է պատվիրատուին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նման հայտը ենթակա է մերժման:

Հիմք ընդունելով 17.04.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը՝ Ընկերությունը գտնում է, որ նույն հիմնավորմամբ ենթակա է նաև մերժման ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթին «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը՝ բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար ՀՀ ֆինանսների նախարարության փոխարեն պատվիրատու՝ ՀՀ քննչական կոմիտե նշելու հիմքով:

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն գտնում է, որ քանի որ «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 10.3-րդ կետը սահմանում է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում պայմանագրի ապահովումում՝ ներկայացված բանկային երաշխիքի ձևով, որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, իսկ ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձև, որը կիրառելի է թե՛ հայտի ապահովում, և թե՛ պայմանագրի ապահովում ներկայացնելիս, ուստի գտնում ենք, որ

Ընթացակարգի հրավերի 10.3-րդ կետով սահմանված պայմանը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացրած պայմանագրի ապահովումում որպես բենեֆիցիար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն նշելու վերաբերյալ, պետք է տարածվի նաև բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման վրա: Ուստի այս հիմնավորմամբ իրավաչափ չէ «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը, այդ թվում նաև վերջինիս ներկայացրած բանկային երաշխիքը, հրավերի պահանջներին բավարար գնահատելու վերաբերյալ, քանզի վերոհիշյալի արդյունքում խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հատկանշական է, որ նույն հիմնավորումը դրված է նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ պարոն Մ. Անանյանի 17.04.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշման հիմքում:

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ սույն Ընթացակարգի շրջանակներում «Գազկոմշին» ՍՊԸ-ն և «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար նշել են միանգամայն այլ սուբյեկտներ. «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես բենեֆիցիար նշել է ՀՀ քննչական կոմիտեն, իսկ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն՝ որպես բենեֆիցիար նշել է ՀՀ ֆինանսների նախարարության: «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն գտնում է, որ նման պայմաններում ավելի քան անտրամաբանական է, որ «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշում է կայացրել այդ երկու ընկերությունների հայտը գնահատել բավարար, քանզի առնվազն մեկի բանկային երաշխիքը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին, և «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն գտնում է, որ այդ ընկերությունն է «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

Ուսումնասիրելով վերոշարադրված փաստերն ու փաստական հանգամանքները՝ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն գտնում է, որ «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով, գործել է ոչ իրավաչափ և նշված հայտը ենթակա էր մերժման:

Բողոքաբերը խնդրել է պարտավորեցնել՝

1. «ՀՀՔԿԴ–ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.05.2018թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով կայացված որոշումը՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում առկա փաստաթղթերը) հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու վերաբերյալ.

2. «ՀՀՔԿԴ–ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 14.05.2018թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով «Գազկոմշին» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակի ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումը.

3. «ՀՀՔԿԴ–ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել որոշում «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Ի լրումն բողոքի՝ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն 06.06.2018թ. ներկայացված գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 10.3-րդ կետը սահմանում է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում պայմանագրի ապահովումում՝ ներկայացված բանկային երաշխիքի ձևով, որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ուստի Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի 10.3-րդ կետով սահմանված պայմանը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացրած պայմանագրի ապահովումում որպես բենեֆիցիար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն նշելու վերաբերյալ, պետք է տարածվի նաև բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման վրա:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր 06.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/27 և 14.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/21 որոշումներով, որոնցով արձանագրվել է, որ բանկային երաշխիքի ձևով ներկայացրած պայմանագրի ապահովման վերաբերյալ սահմանված պայմանները տարածվում են նաև բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման վրա:

Ուստի այս հիմնավորմամբ նույնպես իրավաչափ չէ «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի

հայտը, այդ թվում նաև վերջինիս ներկայացրած բանկային երաշխիքը, հրավերի պահանջներին բավարար գնահատելու վերաբերյալ:

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.06.2018թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ քննչական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ քննչական կոմիտեն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 01.06.2018թ. թիվ 08/18/5564-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.04.2018թ. հայտարարվել է «ՀՀ ՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթ:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 14.05.2018թ. ժամը 09:00-ին: Հայտ են ներկայացրել ութ կազմակերպություններ, որոնցից առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Գազկոմշին» ՍՊԸ-ն՝ որպես հրավերի պահանջներին բավարարող և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 15-րդ ենթակետի՝ եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ինչը նաև նշված է հրավերի 1-ին մասի 10.3 կետում, այսինքն՝ կանխավճար չտրամադրելու դեպքում բենեֆիցիար հանդես է գալիս այն մարմինը, ում պետք է ներկայացվի բանկային երաշխիքը: Պատվիրատուն նշել է, որ հրավերով նախատեսված չէ կանխավճարի տրամադրում:

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի բողոքի իրավական հիմքերում ներկայացված է 17.04.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը, սակայն որոշման համար հիմք է հանդիսացել «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջը, համաձայն որի ներկայացված է եղել «Բանկային երաշխիքի» օրինակելի ձևը, որում որպես բենեֆիցիար նշված է եղել ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը չէր պահպանվել մասնակցի կողմից, և ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշումը:

Պատվիրատուն նշել է, որ ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 423-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 11.08.2011թ. թիվ 1145-Ն որոշումը և հրավերի օրինակելի ձևերից հանված է բանկային երաշխիք հանդիսացող հավելվածը:

Ելնելով վերոգրյալից՝ «ՀՀ ՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաստատում է 14.05.2018թ. կայացրած՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ին որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու իր որոշումը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.06.2018թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի կողմից ՀՀ քննչական կոմիտեի կարիքների ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿԴ–ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

2. «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 11.05.2018թ. տրված թիվ 3382-02 բանկային երաշխիքը, որում որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ քննչական կոմիտեն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի 29.05.2018թ. բողոքը, ՀՀ քննչական կոմիտեի 01.06.2018թ. թիվ 08/18/5564-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Գազկոմշին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Նույն կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից ՀՀ քննչական կոմիտեի կարիքների ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.04.2018թ. կազմակերպվել է «ՀՀՔԿԴ–ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով չի նախատեսվել մասնակցի կողմից ներկայացվող հայտի կամ պայմանագրի ապահովման երաշխիքի օրինակելի ձև:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով նախատեսվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի

ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Նույն կետով նախատեսվել է նաև, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին:

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 10-րդ կետի 10.3-րդ ենթակետով նախատեսվել է, որ Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 11.05.2018թ. տրված թիվ 3382-02 բանկային երաշխիքը, որում որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ քննչական կոմիտեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 383-րդ հոդվածը սահմանում է, որ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի ***պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:***

Այսպիսով՝ բենեֆիցիար ասելով հասկանում ենք պարտատեր, որը տվյալ դեպքում հանդես է գալիս ՀՀ քննչական կոմիտեն, քանի որ «Գազկոմշին» ՍՊԸ-ն համապատասխան պարտավորություններ է ստանձնել ՀՀ քննչական կոմիտեի, որպես պատվիատուի կողմից իր կարիքների համար հայտարարված «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում:

Միևնույն ժամանակ թե Կարգը և թե Ընթացակարգի հրավերը սահմանում են այն դեպքը, երբ երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշվում է ՀՀ ֆինանսների

նախարարությունը, այն է, երբ պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին ներկայացնում է նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Մնացած այլ դեպքերում ոչ Կարգը և ոչ Ընթացակարգի հրավերը չեն նախատեսում, որ հայտի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելիս բենեֆիցիար պետք է նշվի ՀՀ ֆինանսների նախարարությունը: Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի ապահովման վճարման պահանջագրի և դրա պարտադիր պայմանների և լրացման ուղեցույցի համաձայն՝ որպես շահառու ի սկզբանե լրացված է ՀՀ քննչական կոմիտեն, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն փաստը, որ պարտատերը տվյալ դեպքում հանդիսանում է ՀՀ քննչական կոմիտեն, և նույն տրամաբանությամբ հայտի ապահովման բանկային երաշխիքի մեջ նույնպես որպես բենեֆիցիար պետք է նշվի պատվիրատուի անվանումը:

Դրա հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2018թ. N 423-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել էր Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հայտի ապահովումը ներկայացվում է օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար, իսկ պայմանագրի ապահովումը՝ օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովելու համար: ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1145-Ն որոշմամբ հաստատված ***երաշխիքի օրինակելի ձևը*** կիրառելի էր թե հայտի ապահովում և թե պայմանագրի ապահովում ներկայացնելիս: ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի

օրինակելի ձևի մեջ ի սկզբանե որպես բենեֆիցիար ՀՀ ֆինանսների նախարարությունը նշված չէ եղել: Այս տեսանկյունից անհիմն է «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 06.06.2018թ. ի լրումն բողոքի ներկայացված այն դիրքորոշումը, համաձայն որի եթե պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում պայմանագրի ապահովման մեջ՝ ներկայացված բանկային երաշխիքի ձևով, որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ուստի այդ պահանջը պետք է տարածվի նաև բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե պայմանագրի ապահովման և թե հայտի ապահովման դեպքում կիրառելի է երաշխիքի նույն օրինակելի ձևը: Այսպիսով՝ խոսքը վերաբերում է միայն երաշխիքի օրինակելի ձևին, ինչը չի նշանակում, որ Օրենքով կամ Կարգով պայմանագրի ապահովման համար նախատեսված պահանջները (իրավական կարգավորում) կիրառելի են նաև հայտի ապահովման նկատմամբ, քանի որ պայմանագրի ապահովումը և հայտի ապահովումը տարբեր իրավական կատեգորիաներ են: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 15-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, հետևաբար նշված դրույթը չի կարող կիրառվել բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացնելիս:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ թե Կարգով և թե Ընթացակարգի հրավերով համապատասխան պահանջի բացակայության պայմաններում՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար իրավաչափորեն նշվել է ՀՀ քննչական կոմիտեն: Ուստի գտնում եմ, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտի ապահովումը սույն մասով համապատասխանում է հրավերի պահանջներին և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Մասնակցի հայտը գնահատելով բավարար, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 29.05.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**